

1930ական թուականներից սկսած ժողովրդական բանահիւսութեան բնագաւառը զլխաւորում էին մեծանուն գիտնականներ Մ. Արեղեանն ու Եր. Լալայեանը: Խորհրդային Հայաստանի տարբեր շրջաններն էին գործողութեամբ գիտական արշաւախմբեր ու անհատ բանահաւաքներ: Բանահաւաքչական այդ աշխատանքները ղեկավարում էին հմուտ մասնագէտներ Կ. Մելիք-Օհանջանեանը, Սպ. Մելիքեանը, Սրբ. Լիսիցեանը եւ ուրիշներ:

Այժմ բանահաւաքչական աշխատանքները կենտրոնացուած են Հայաստանի Գիտութիւնների Ակադեմիայի հնագիտութեան ու ազգագրութեան հաստատութեան մէջ: Եթէ անցեալում բանահիւսութեան նիւթերի հաւաքման գործը առանձին անհատների հայրենասիրական նախաձեռնութեան արդիւնք էր, ապա ներկայումս այն դարձել է ծրագրուած ու տեւական գիտական գործունէութեան ասպարէզ: Հանրապետութեան շրջաններն ու աւաններն են մեկնում խմբական գիտարշաւներ, որոնք մանրամասն ու հանգամանօրէն ծանօթանում են տեղացի բանասացներին, երգիչներին ու նուագողներին, գրի առնում նրանց պատմած հեքիաթներն ու զրոյցները, ձայնագրում բազմապիսի երգերն ու մեղեդիները, լուսանկարում ժողովրդական պարերն ու թատերական-ծիսական արարողութիւնները եւ այլն: Խմբական համակցուած հետազոտական այդ աշխատանքը հնարաւորութիւն է ընձեռնում ժողովրդական ըստեղծագործութեան այդ երեք բնագաւառները՝ բանարուեստը, երգարուեստը եւ պարարուեստը հետազոտելու իրենց կազմին եւ կապակցութեան մէջ: Հսկայական գործ են կատարել նաեւ անհատ բանահաւաքները: Նրանք Հայաստանից բացի լիւնում են միւս հանրապետութիւնների հայաբնակ աւաններում ու գիւղերում: Մարդարիտ Գրիգորեանը շրջելով Ղարաբաղի գիւղերը, տարիների ընթացքում հաւաքել է տեղացիների հեքիաթները: Նոյն

ձեւով հաւաքուել եւ արդէն լոյս են տեսել Նոր Նախիջեւանի հայերի ժողովրդական բանահիւսութեան նիւթերը: Մեծ եղեռնին վերաբերող բանահիւսական ուշագրաւ նիւթեր է հաւաքել լեզուաբան Ն. Մկրտչեանը: Վերջին տարիների ընթացքում տարբեր եղանակներով գրի են առնուել ու հաւաքուել ժողովրդական բանահիւսութեան, երաժշտութեան եւ պարարուեստի շուրջ 3000 անուն ստեղծագործութիւն:

Ազգանուէր ու հանրօգուտ այս աշխատանքներից անմասն չէ նաեւ սփիւռքի մտաւորականութիւնը: Մեծ Կոմիտասի աշակերտներից մէկը՝ որն շուրջ քառասուն տարուայ ընթացքում հաւաքել եւ խաղաղրել է արեւմտեան Հայաստանի տարբեր գաւառներից արտագաղթած Հայերի երգերն ու ասացուածքները: Բանահիւսական տարբեր տեսակի նիւթերի հաւաքածոներ են ուղարկել Հայաստանի Գիտութիւնների Ակադեմիայի հնագիտութեան եւ ազգագրութեան հաստատութեան բանահիւսութեան բաժնի սփիւռքահայ մտաւորականներ Ռ. Ճեպեճեանը, Կ. Սաֆարեանը, Ար. Գեւորեանը եւ ուրիշներ: Սփիւռքի բանահիւսութեան նիւթերի հաւաքումը եւ կործանից ու մոռացութիւնից փրկելը հրատապ եւ հայրենանուէր մեծ գործ է, որը պէտք է դրաւի մեր մտաւորականութեան ուշագրութիւնը:

Ժողովրդական բանահիւսութեան նիւթերը մեծ ու կարեւոր արժէք են ներկայացնում հայ մշակոյթի համար, որոնք առատ ու հարուստ նիւթ են տալիս պատմաբաններին, ազգագրագէտներին, բանագէտներին, լեզուագէտներին, արուեստագէտներին, փիլիսոփաներին եւ այլ մասնագէտներին՝ քննելու եւ լուսաբանելու հայ ժողովրդի աշխարհայեացքում ու հոգեբանութիւնը, նրա կենցաղն ու սովորութիւնները:

Երեւան

ԱՐՏԱՇԷՍ ՆԱԶԻՆԵԱՆ

ԵՐԱԶՆԵՐՈՐ ԿՈԶԵՆ

ԿԱԿԱԶՆԵՐԸ

Ես կը սիրեմ կակաչներն,
Ինչպէս բուշերը մանկան.
Իբրեւ համբոյր, իբրեւ սէր,
Գեղեցկութիւնը գարնան:

Բռնած են դաշտ եւ այգի,
Հագարաւոր, բիւրաւոր.
Մէկը միւսին կը նայի,
Կոյսը կոյսին դէմ աղուոր:

Ծաղկէ ծաղիկ կը բռչին,
Ճառագայթներն արեւուն,
Եւ անգամ մ'ալ կը վառին
Երկինքին հետ ամազուն:

Զեփիւնը երբոր կը հասնի,
Ծափ կը գարնեն ժպտագին,
Եւ մեղմ խաբշափ մը կ'անցնի,
Ցնծութեան հետ սիւսին:

Կարմիր, կարմիր եւ կարմիր
Արփայական ծիրանի.
Ուր հորիզոնն ոսկեծիր,
Հըրաշքներով կը լեցուի:

Կարծես կղզին բովանդակ
Ըլլայ հսկայ ծաղկաման,
Եւ իր բուրումն անապակ,
Տենչ է սրտին վանական:

Թիքեռնիկներ ոսկեգոյն
Դադար չունին սիրելու.
Զըկայ ուրիշ տեղ գարուն,
Այսօր մօտիկ սրտերու:

Շարքերն անոնց չեն արեր
Ծանր ֆայլեր մարդկային,
Լոկ ծառերու ըստուերներ,
Թեթևորեն կը հանգչին:

Այստեղ երկինքն ուրիշ է,
Հազար գոյնով ծիածան,
Որ լինէ լին կ'երկարէ
Բոցը ջահի մը նըման:

Եւ օր մ'յանկարծ խենթ ֆամին
Մէկիկ մէկիկ կը մարէ.
Ինչպէս մոմերը ժամին
Երբոր կ'անցնի Կիրակին:

9 Հոկտ. 1967

ԱՐԵՒԻՄԱՐԸ

Յուշիկ յուշիկ ֆայլերով,
Ինչպէս ոգի լուսաւոր,
Շողը կու գայ շողին ֆով,
Երեկոյեան դէմ աղուոր:

Ձեռք մը բոսոր կը ներկէ,
Հորիզոններ հեռաւոր.
Արեւելեան հինայ է,
Կամ ծիրանի ծոպաւոր:

Հրդեհ մը կայ ամէնուր,
Երեւոյթ է եւ չ'այրեր.
Լինն աւագան ոսկեքոյր,
Ուր կը լողան կոնտուներ:

Արփին դանդաղ կը հակի,
Համայնական ժըպիտով.
Շողերն առանց քրոնիչի,
Կը հեռանան երթալով:

Գոյն է ամէն բան հիմա,
Եւ աչքերու ֆաղցրութիւն.
Արարչագործ ձեռք մը կայ,
Որ ձեւ կու տայ իրերուն:

Նստիլ ծառի մը բունին,
Ու լուռ դիտել հորիզոնն,
Կ'ընդարձակուի եւ հոգին,
Տեսիլփին հետ երկնային:

Զանգակներու երգ մը կայ
Կապոյտին մէջ ներդաշնակ.
Վենետիկն է որ կը գգայ,
Աղօթելու ջերմ փափաք:

Դէմքերն հիմա մարդկային,
Ե՛ւ բարի են ե՛ւ խոկուն.
Աչքերն իրար կը նային,
Ուր կայ լոյսի ֆաղցրութիւն:

Յափըշտակուած է կղզին,
Գեղեցկութեամբն իրիկուան.
Ու ճանաչներ կը բառին,
Տանիքներու բարձրութեան:

Արփին հիմա կը ժողովէ
Հանանչներն իր ցիր ու ցան.
Մութը բեւն իր կ'երկարէ,
Պարփակելու ամէն բան:

Բայց իմ աչքերս տակաւին
Ձեռն բաժնուիր երկինքէն.
Վերջին շողերն արեւին,
Դեռ աւելի չ'ենալ են:

22 Նոյեմ. 1967

ԱՇՈՒՆԸ

Դանդաղօրէն, մեղմօրէն
Կը բօքափին տերեւներ,
Կ'իյնան հսկայ ծառերէն,
Կ'իյնան սրտէն հարուստին,
Խրնիքին մօտ աղֆատին,
Համբաններու եզերքին,
Անտառներուն մէջն հեռու,
Մարած յոյսի պէս դեղին
Հողին հետ հող դառնալու:

Նոյնն է աշուն կամ ձմեռ
 Ով բան չունի տանելու.
 Հարկաւոր չեն դիպակներ
 Գերեզմաններ ծածկելու.
 Երկու տերեւ կը բաւեն
 Երկու աչքեր գոցելու,
 Եւ տենչանքներ մարդկային
 Յանձնել սուրող ֆամիին
 Սուտ անըրջանք փոխուելու:

Սրտիս մէջն ալ աշուն է
 Խանդ եւ երագ կը մարին.
 Աւա՛ղ, ուրիշ աշուն է,
 Որ չի դառնար վերքստին.
 Կու գայ քախիծն օրէ օր,
 Ըստուերի պէս յամբաֆայլ,
 Եւ գարուններս իմ աղուոր
 Լոկ յիշատակ եւ անցեալ,
 Զիս կը քողուն մենաւոր:

Դանդաղօրէն, մեղմօրէն,
 Կը քօթափին տերեւներ,
 Կու գայ ձմեռն հեռուէն
 Հետը սարսուռն ֆամիներ,
 Եւ կը քափին, կը քափին,
 Յոյս ու տերեւ միասին,
 Համբաներու եզերքին,
 Ոտքերուն տակը կոխան.
 Աշուն է եւ կղզիին:

27 Նոյեմ. 1967

Լ.ՃԱԿԻՆ ՎՐԱՅ

Լընակին վըրայ կը ցոլայ կղզին,
 Կը նային ծառերն անցնող կոնտուրին.
 Երգ մը վիպական ոսկի երիզով,
 Ալիքէ ալիք, կ'անցնի երագով:

Ո՛հ, ինչ ֆաղցր է լընակին վըրայ
 Ըլլալ նայանուշ, ըլլալ լուսնկայ.
 Բռնել գեփուտին քեւերէն փափուկ,
 Վայրկեան մը սիրել կեանքը խուսափուկ:

Պէտք չըկայ երագ, սիրոյ զառանցանք,
 Գեղեցիկ է լինն եւ իրական կեանքն.
 Հոգիս կոնտուր մ'է որ հեշտ կը սահի,
 Այնքան ժպտադէմ, որ շող կը քրէի:

Թիերու հոգիներն հաւասար չափով,
 Կարծես վարձակի պարն է գոյգ տափով.
 Կ'իջնեն բեկբեկուն ջուրին մէջ ոսկի,
 Վեր կը բարձրանան գոհարներով լի:

Ու կոնտուրավարն իր դէմքն երկինքին,
 Կ'երգէ հէգ Նինան, խաբուած սիրուին.
 Դէպի սուրբ Մարկոս, դէպի Վենետիկ,
 Կոնտուրն է հիմա սեւ կէտ մը փոքրիկ:

Ո՛հ, երագ չունիմ, աչքերս են լեցուն,
 Զֆնաղ օրերով համակ ասմագուն.
 Լընակին վըրայ կը ցոլայ կղզին,
 Զուրին մէջ ոտքերն ու դէմքն արեւին:

30 Նոյեմբեր 1967

Ե. ԶԱՐԵՆՅ ՎԵՆԵՏԻԿԻ ՄԷՋ

Զըրանցներու եզերքէն,
 Իր ֆայլերուն հետ օտար,
 Մէկը կ'անցնէր յարմարաբար,
 Կորաֆամակ եւ նիհար:

Աչքերուն մէջ կու գային,
 Եւ կ'անցնէին պալատներ.
 Ծըփանքին հետ ալիքին,
 Կոնտուրավարը կ'երգէր:

Մինչ ծաղկահիւս շալն ուսին,
 Վենետիկուին շաղակրատ,
 Կը ծիծաղէր եւ ուժգին
 Զայնը կ'անցնէր պատէ պատ:

Բայց օտարն այդ գանգրահեր,
 Իր աչքերով վառվրոտն,
 Կարծես Տանքէն կը փնտռէր,
 Ամբոխին մէջ անանուն:

Տեսիլներով վերացած,
Եւ քովն արուեստը մուսայ,
Այդ փաղափին առեղծուած,
Սիրտը կ'ուզէր տալ ընծայ:

Բերած էր նա իրեն հետ
Արեւելեան երազներ.
Իր Լուսաբացն արփաւէտ,
Համայնական աշխարհ էր:

Դըրան մը մօտ լայնաբաց
Մըտերմօրէն կանգ առաւ.
Երգի մը պէս փնտրուած,
Ձայն մը լսեց սրտագրաւ:

— Ո՛հ, Ձարենց դու, ներս արի —
Ընդառաջեց վարուժան.
Երկու փերքով քեւ քեւի,
Մէկ համբոյրով միացան:

Պալատին մէջ այդ չփնաղ,
Ցեղին ամբողջ սիրտը կար.
Եւ մանկութեան հետ ուրախ,
Հայու հոգին կը ցնծար:

Մին Հեքանոս երգերով,
Միւսը բամբիւր ձեռքին,
Սիրտը բերին սրտի քով,
Գովքն հայրենի հիւսեցին:

Ջրանցքներու մէջ սակայն,
Երգով կ'անցնէր Խալիլան.
Վենետիկն էր ըզգեցած,
Իր ծիրանին տոժական:

Եւ Եղիշէն կը տենչար,
Իր աչքերով համբուրել,
Ամէն խոյակ եւ մարմար.
Աղաւնիներն եւ ընտել:

Որքան կ'ուզէր Թիցիանոն,
Ձեռքը սեղմած ողջունել.
Եւ սրտագին նոր գեղօն,
Աղօթքի պէս նուիրել:

Բայց նա գիտէր քէ հեռուն
Կղզի մը կայ մեմաւոր.
Իր օրերուն մէջ խոկուն,
Իր անունով փառաւոր:

Հոն տակաւին Ալիշան,
Մասիսի դէմ կ'աղօթէր.
Այնտեղ Ոգին Հայութեան
Մեքսիկայի լոյս դէմքն ունէր:

Հասաւ կոնտոլն այդ կղզին,
Անգէտ հաննար մը գրկած.
Նա մարմարէ ափունքին,
Ոտքը դըրաւ երկիրած:

— Հայրենի հող, քեզ կրկին
Կը համբուրեմ խոնարհած —,
Բացազանչեց սրտագին,
Ձարենց աչքերը լեցուած:

Լայն կամարներն ըզգացին,
Իր փայլերու մեղեդին.
Ուրիշ էր այս հայ կղզին,
Խոհերն ինչպէս Նարեկին:

Եւ սիրտն անոր ծովի նման,
Սէրը կու գար չէր լեցուեր.
Վարդի մը չափ Հայաստանն,
Անանց տեսիլք կը քըւէր:

Ու մատեններ, մատեններ,
Ուր միտքն է խոր, սիրտն համբոյր,
Կը բերէին գերդ նըւէր
Հայրենիքի փաղցըր բոյր:

Ձիթենիի ճիւղ մ'առած
Ձարենց փարափը գրնաց.
Սիրտն այս անգամ կամրջած,
Հայաստանէ Հայաստան:

20 Դեկտ. 1967

Հ. ՎԱՀԱՆ ՅՈՎՀԱՆՆԵՍՅԱՆ